2126.21702

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

«09» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0028-21

Ձեռնարկողը՝ ***«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ***
Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Գործարանային 1

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 18/1, 18/2, 18/4, 18/13, 18/14 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0028-21

«03» 02 2021թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 18/1, 18/2, 18/4, 18/13, 18/14 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պող. հ. 18/1, 18/2, 18/4, 18/13, 18/14 հասցեներում (երկրորդ փուլ) կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր (կառուցապատողներ՝ «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ, «Ալ Ընդ Ալ» ՍՊԸ, քաղաքացիներ Սամվել Արսենյան, Մարտին Հովհաննիսյան, Ռուզաննա Գալֆայան):

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2020թ նոյեմբերի 5-ի N01/18-07/1-Պ-3170-1046 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 3.413517հա, 0.08628հա, 0.01238հա, 0.09683հա, 0.01272հա մակերեսներով հողամասերում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2020թ. փետրվարի 27-ին նախագծի առաջին փուլի իրականացման համար տրամադրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն՝ ԲՓ-17:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախագծվող համալիրի համար տրամադրված հողամասը գտնվում է Արշակունյաց պողոտայի հարավ-արևմտյան մասում՝ Արշակունյաց պողոտայի և

ՀՀ ԲՆՕՐՀԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Հրազդան գետի կիրճի միջնամասում: Հողատարածքը հիմնականում հարթ է՝ բացարձակ նիշերի չնչին տարբերությամբ: Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները, ծառաթփային բուսականությունը, ջրային ռեսուրսները բացակայում են:

Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի վերին պլիոցեն-պլեյստոցեն դարակարգի լճագետային նստվածքները, որոնց ծածկում են նեոպլեյստոցեն դարակարգի հրաբխային ապարները՝ բազալտները, վերջիններիս էլ ծածկում են ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ և տեխնոգեն առաջացումները: Հետազոտության տվյալների համաձայն կառուցապատող տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կառուցապատվող տարածքն իրենից ներկայացնում է շինհրապարակ, որտեղ ներկայումս համաձայն տրամադրված շինարարության թույլտվության, ընթանում են առաջին փուլով նախագծված և համապատասխան թույլտվություններ ստացած նախագծով նախատեսված շինությունների կառուցապատման աշխատանքները: Արդեն իսկ ավարտվել են առաջին փուլով նախատեսված հողային աշխատանքների մի մասը և ընթանում են հիմքերի և ստորգետնյա հարկերի բետոնային աշխատանքներ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես (2-րդ փուլ) – 36220.0մ^2,
- կառուցապատման մակերես – 9900մ^2,
- կանաչապատման մակերես – 14500մ^2,
- ճանապարհներ, սալվածքներ և այլն – 11820մ^2,
- բնակարանների ընդհանուր թիվը – 1167մ^2,
- ստորգետնյա ավտոկայանատեղի – 814 մեքենա:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Համաձայն նախնական գնահատման հայտի Արշակունյաց պողոտայից դեպի համալիրի տարածք սկիզբ առնող ճանապարհները կառուցապատվող տարածքում ճյուղավորվելով, բոլոր մասնաշենքերի շուրջն ապահովում են հետիոտնի և տրանսպորտի հարմարավետ մոտեցումներ: Ճանապարհները փոքր թեքությամբ ուղղված են դեպի Արշակունյաց պողոտա, որոնցով անցնում են ինժեներական հաղորդակցուղիներ, այդ թվում՝ մակերևույթային ջրերի հեռացման գծեր: Հիմնական մոտեցումներն ապահովված են Արշակունյաց պողոտայի կողմից: Կից գտնվում են բազմաբնակարան, անհատական բնակելի, վարչական և հասարակական շենքեր: Մոտակա բնակելի հասարակական շենք շինությունները գտնվում են 30.3մ -34.7մ հեռավորությունների վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցել 7 բնակելի և 2 վարչական գրասենյակային շենքեր: Գլխավոր հատակագծում շրջանաձև տեղադրված են 16 հարկանի նմանատիպ «Ա», «Բ», «Գ», «Դ», «Ե», «Զ» բնակելի մասնաշենքեր: «Դ» և «Զ» մասնաշենքերի հարևանությամբ, հողամասի եզրային հատվածում նախատեսված է 25 հարկանի բնակելի «Է» մասնաշենքը: Արշակունյաց պողոտայի երկայնությամբ տեղադրված են «Ը» և «Թ» վարչական գրասենյակային մասնաշենքերը՝ համապատասխանաբար երեք և հինգ հարկի բարձրությամբ: Բոլոր մասնաշենքերը ստորգետնյա երկու հարկերով միանում են միմյանց և համալիրի համար ձևավորվում են մեկ միասնական ավտոկայանատեղի: Ավտոկայանատեղի տրանսպորտային միջոցների մուտքը և ելքը ապահովվում է երեք թեքահարթակների միջոցով: «Ա», «Բ», «Գ», «Դ» մասնաշենքերի կենտրոնում տեղակայված է բնակիչների հանգստի, մանկական խաղերի համար նախատեսված 100մ x 45մ չափերի զբոսայգի: Նույն նպատակին են ծառայում նաև «Ե» և «Զ» մասնաշենքերի միջնամասում տեղակայված չորս պուրակները: Բոլոր մասնաշենքերի հարևանությամբ նախատեսված են բացօթյա ավտոկայանատեղեր: Բնակելի մասնաշենքերի 1-ին, 2-րդ հարկերը նախատեսված

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

են որպես առևտրի, սպասարկման, մանկապարտեզի տարածքներ: Բնակելի շենքերի կենտրոնական ջեռուցումը և տաք ջրամատակարարումն իրականացվելու է շենքի վերջին՝ տեխնիկական հարկում տեղադրված կաթսայատնից: Բնակարանների խոհանոցների սալօջախների համար նախատեսված է միայն էլեկտրամատակարարում՝ առանց գազամատակարարման: Ջերմամատակարարումն իրականացվելու է կենտրոնացված: Գազամատակարարումը 1500մ³ ծախսով իրականացվելու է համաձայն գազամատակարարման տեխնիկական պայմանի:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն, միանալու է «Ա» և «Բ» մասնաշենքերի հարևանությամբ և «Ե» մասնաշենքի ստորգետնյա -1 հարկում տեղադրված երկու տրանսֆորմատորային ենթակայաններից:

Շահագործման ընթացքում բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Կենցաղային պայմանները կապահովվեն համաձայն տեխնիկական պայմանի միանալով Արշակունյաց պողոտայով անցնող D=400 մմ ջրատարից և D=1000մմ կոյուղատարից: Հեղեղատարը կմիացվի Արշակունյաց պողոտան հատող D=500մմ հեղեղատարին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ 2-րդ փուլի շինարարական աշխատանքները տևելու են 48 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (310 մարդ), ինչը կազմում է 10771մ³/շին.ժամ: 1000մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2160մ³/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 12931մ³/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 190000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 178000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային (74.4տ) և շինարարական (280մ³) աղբն է: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 14500մ²: Քանի որ, ըստ գնահատման հայտի շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի 1450մ³ բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Ըստ կանաչապատման նախագծի նախատեսվում է տարածքում տնկել հետևյալ ծառատեսակները՝ թխկի սրատերև կարմիր, լաբոռնում անագիրատերև, գնդաձև իլենի, ձիակասկ, սյունաձև թույա, հուդայածառ, ոսկեգույն թույա, ասպիրակ, բարբարիս, սակուռա, փռվող գիհի, Ֆորզիցիա, սամշիտ 1580գծմ, թզուկ վարդեր 516մ², սիզամարգ 12240մ²: Ծառերի և թփերի տնկման աշխատանքները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման նախագծին համապատասխան: Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ գոյություն ունեցող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,

- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար՝ ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվելու է հատկացնել 1880000 դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, քաղաքաշինության կոմիտեն, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER"
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:»:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պող. հ. 18/1, 18/2, 18/4, 18/13, 18/14 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի (երկրորդ փուլ) կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ Ա. Վարդանյան